

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 50/1

11 հոկտեմբերի 2013 թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով Ա/Ձ Մակիչ Մնացականյանի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ պաշտոնատար անձանց գործողությունների, մասնավորապես՝ Սևանի ՏՀՏ 09.09.2013 թ-ի թիվ 2126539 ստուգման ակտի դեմ բերված գանգատը (մուտք ՀՀ ԿԱ ՊԵԿ 17.09.2013 թ. թիվ 11367-13) և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ պետի 23.08.2013 թ-ի թիվ 2126539 հանձնարարագրի Ա/Ձ Մակիչ Մնացականյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում 09.09.2013 թ-ին կազմվել է է թիվ 2126539 ստուգման ակտը, որով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Ա/Ձ Մակիչ Մնացականյանի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ 09.09.2013 թ-ի թիվ 2126539 ստուգման ակտի դեմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացվել է գանգատ: Այնուհետև ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում Ա/Ձ Մակիչ Մնացականյանը 02.10.2013 թ-ին տվել է գրավոր բացատրություն, որում նշել է, որ հրաժարվում է Հանձնաժողով ներկայացված գանգատից և խնդրել է այն քննության չառնել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Մակիչ Մնացականյանի գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ա/Ձ Մակիչ Մնացականյանի գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ